



ՕՐԱԳԻՐ

# ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ և տ և ս կ ա ն և շ Բ և ս կ ա ն

Գ Ի Տ Ե Լ Ե Ա Յ

ԺԲ. ՏԱՐԻ. ԹԻԻ 7.

1854

ԱՊՐԻԼԻ 1.

## ԲԱՐՈՅԱԿԱՆ

Փորձով իմացեր եմ և գիտեմ : (Երես 65)

Համարինք թէ Միլիկէի խորերը գացեր ենք բարբարոսներու մէջ, որոնք չեն գիտեր թէ ինչ է քաղաք, ինչ է պալատ և ինչ է քաղաքականութիւն, և ոչ ճարտարագործ բան մը տեսեր են, և անոնց սկսինք պատմել և քաղաքականութեան վրայօք տեղեկութի տալ : Յայտնի է որ ամենքն ալ կը զարմանան և իրենց սգէտ ըլլալին կը խոստովանին . բայց եթէ անոնց խեղճ վիճակներն ուն վրայ ցաւելով դառնանք ըսենք՝ թէ Ղուբ խեղճ էք, թշուառութե մէջ էք, եկէք ձեզի սովորեցնենք աղէկ հանգիստ կեանք անցընել, անոնք սովորիլ ուղելու

տեղ՝ կը զարմանան թէ իրենք ինչու թշուառութեան մէջ պիտի սեպուին . մենք որչափ որ ցաւինք անոնց խեղճութեան վրայ, անոնք այնչափ աւելի կ'արհամարհեն մեր առաջարկութիւնները, ու կը բարկանան զիրենք թշուառ սեպելուս վրայ : Տես թէ ինչպէս իրենց սգէտ ըլլալին կը խոստովանին, բայց այն չգիտցած բաներնուն կարօտ ըլլանուն չեն հաւտար . որովհետեւ չեն տեսած, չեն իմացած, չեն կրնար կարծել թէ այնպիսի բաներ կան, որոնց վայելքէն զրկուած են իրենք : Ինչոք կարծեն որ՝ եթէ պատմածնիս փափաքելի

բաներ ըլլային, իրենք ալ լսելու ատեն նին պիտի ճանչնային, որովհետեւ ճանաչմունք ունին :

Նա այսպէս է մարդու բնութիւնը չգիտցած բանին իր կարօտ ըլլալը չճանչնար, և այս՝ ամէն տեսակ բանի մէջ . քանի որ այն բաներուն պատճառները չգիտեր, անոնց վրայ սխալ դատաստան ընելը իրաւունք կը սեպէ . թէպէտ կը խոստովանի իր տգիտութիւնը, բայց դարձեալ իր ծուռ դատաստանը կ'ընէ, առանց կարօտ սեպելու ինքը զինքը այն պատճառներուն, զորոնք չգիտնալը կը խոստովանի : Այլ ազգի մը կամ մարդու մը տգիտութիւնն ու սխալմունքը ահա այս բանիս վրայ հիմնած է . և այս է աղբիւր ամէն չարեաց, խռովութեանց, անմիաբանութեանց, և այլն :

Մկից առաջ կու գայ որ ամենքը կ'ուզեն ազգին բարիքը, ամենքն իրարու բարիք կը մաղթեն, ամենքն ազգասէր կը կոչուին, ու ամենքն ալ խռոված կը մնան՝ առանց կրնալու բարիք մ'ընել կամ վայելել : Օ որ օրինակ ըսենք թէ յիսուն տգէտ անձինք ընկերութիւն մ'եղեր են, ժողովքի կը նստին՝ ամենքը մէկ բերան կը խոստովանին՝ թէ մենք տգէտ ըլլալնու համար այսպէս խեղճ մնացեր ենք : Բայց այն յիսունին մէջէն ամէն մէկուն միտքը եթէ քննելու ըլլաս, կը տեսնես որ ամենուն միտքն ալ այս է՝ թէ քառասունըինը ընկեր ունիմ, ամենքն ալ տգէտ, խելքով բան մ'ընել չեն գիտեր, և չեն ալ միաբանիր : — Իսկ իրենք իրենց վերայ տարիքնին առածները ամենքն ալ կը մտածեն . Այս ալ ասոնցմէ մէկն եմ, բայց գոնէ ես աշխարհք տեսեր եմ, զլիսէս բաներ անցեր է, և անոր համար ըստ տեղւոյն խելքով մտածել գիտեմ : — Երրասաններն ալ կը մտածեն . Սա քառասունըինը ընկերներու մէջէն ոմանք տգէտ՝ տարիքնին առած, իրենց գիտցածէն անդին նոր բան չեն ուզեր լսել, հին ատենի մարդիկ են . ոմանք ալ տաք գլուխ երիտասարդներ՝ խօսք չեն հասկընար . ուր էր թէ ամենքն ալ ինձի պէս ըլլային,

որ բնական խելքով ամէն բանի խելք կրնամ հասցընել : Այսպէս եթէ ամենուն մտքերնուն մէջի ձայները լսես, կը տեսնես որ ամէնը մէկ բերան կը պոռան . Մը էր թէ աս ընկերներս ալ ինձի պէս բնական մտածել գիտնային : Այլ ամէն մէկը այսպէս մտածելու ատեն կարծէ թէ ինքը միայն է որ այսպիսի խորհուրդ ունի մտացը մէջ՝ բնական խելքի ըլլալով . և դրսուանց ամենքն ալ տգէտ ենք, խորհուրդ կարօտ ենք, կ'ըսեն, մեզի մէկ խորհուրդ տուող մ'ըլլար . բայց սրտանց ամենուն միտքն ալ ուրիշներուն վրայ է, որ անոնք ալ իրենց պէս խելքով վարուիլ սովորին : Անոր համար եթէ գիտուն մարդ մը գայ ու իրենց մտքերնին դրածէն դուրս խորհուրդ մը տայ, որուն պատճառները իրենք չեն սովորած, չեն գիտեր, անոր համար խելքերնին ալ չհասնիր, այն ատեն ամենքն ալ զայն խորհուրդը կ'արհամարհեն, որովհետեւ իրենց մտաց յարմար բան չըսաւ . իրենք իրենց տրգէտ ըլլալը կ'ընդունին, բայց գիտունին պատճառներուն խելքերնին չհասնելը չեն ընդունիր : Այլ սկսին ըսել թէ Մենք զայս մարդս խելքի կարծելով բերինք մէջերնիս . բայց այս չէ թէ խելքի, այլ խելքէ դուրս մտածմունքներով պաշարուած մարդ մըն է եղեր . մեր կարծիքները արհամարհելէն ուրիշ բան չգիտեր : Մէկ կողմանէ տգէտ ենք կ'ըսեն, մէկալ կողմանէ ալ գիտունին ըսածները իրենց խելքովը կ'ուզեն չափել : — Աստի տգէտները կը նմանին այն մարդիկներուն, որ պատի մը տակ կեցած՝ կ'ուզեն պատին վրան ելլել ու մարդ մը կը փնտռեն որ իրենց ճամբայ մը ցուցընէ . բայց երբ մէկը սանդուխ մը ձեռքը առած մէջերնին գայ, կը սկսին վրան ծիծաղիլ, ու չեն թողուր որ սանդուխը պատին կը թնցընէ, ըսելով թէ Չըլլար, որովհետեւ մենք այդպէսով վեր ելլել չենք գիտեր :

Տգիտութեան սովորութիւնը այս ըլլալն իմանալէդ ետքը, հիմայ ասոր պատճառն ալ մտիկ ըրէ . բայց եթէ կ'ուզես լսածէդ օգուտ քաղել, աղէկ

ուչ դիր, և լսածդ քու վրայ յարմարը  
 ներու ջանա : Արդ օրինակով մը քեզի  
 բացատրեմ թէ ինչու համար մարդս  
 ինք իր վրայ տգիտութիւն չկրնար տես-  
 նել՝ որչափ ալ որ աշխատի : Աշխարհս  
 մեծ խուց մըն է լի բարեօք, և մարդիկ  
 ամենքն ալ այս մեծ խուցին մէջի բը-  
 նակիչներն են . և ամէն բնական և  
 գերբնական ճշմարտութիւնները, ու-  
 բոնք քննելով միայն կը գտնուին և մար-  
 դուս համար եղած են, այս մեծ խու-  
 ցին չորս դին դարաններու մէջ պա-  
 հուած են . և մարդս զանոնք պէտք է  
 գտնէ, որ կարենայ՝ թէ՛ այս աշխարհիս  
 խուցին մէջ, և թէ՛ խուցէն դուրս ելած  
 ատեն վայելք ու հանգիստ ունենալ . և  
 այս ճշմարտութեանց դարաններն ալ  
 կրկին դռներով գոցուած են իրարու  
 վրայ : Արդս երբ կը ծնանի կու գայ  
 աս խուցս՝ կ'ուզէ վայելել իրեն համար  
 եղած խուցին մէջի բարիքները . ուստի  
 քանի որ չգիտեր թէ դարաններու մէջ  
 են բուն մարդուս վայելելու բարիքները  
 և խուցին մէջի եղածն ալ վայելելու  
 ճամբան սովորեցնող ճշմարտութիւնները,  
 կը սկսի աչքին առջին եղածներուն ե-  
 տեւէն իյնալ որ վայելէ . իսկ ուսու-  
 ցիչք և ուսմունք դարաններուն բանա-  
 լիներն են, որոնք մարդուս առջև դա-  
 րանները կը բանան : Աւստի որոնք որ  
 այս բանալիները չունին, դարաններուն  
 մէջ ինչ գտնուիլը չեն գիտեր . թէ-  
 պէտ և չգիտնալին ալ խոստովանին,  
 բայց չկրնալով մակաբերել՝ թէ իրենց  
 տեսածներէն զատ ինչ բան կրնայ  
 գտնուիլ այն դարաններուն մէջ, կը  
 սկսին ըսել՝ թէ թէպէտ տգէտ ենք,  
 բայց ամէն գործքերնիս մտածելով կ'ը-  
 նենք . և այսպէս իրենց խելքերնուն  
 հաւնած գոհ կ'ապրին . և թէ ուրիշ մը  
 դարաններէն հանած ճշմարտութիւն  
 մը անոնց առաջարկէ, չընդունիլը խելա-  
 ցութիւն կը սեպեն : Իսկ այն բանալի-  
 ները, այսինքն ուսմունքները և ուսուցիչ-  
 ները, որ միայն դարաններուն մէյմէկ  
 դռները կը բանան, անոնք ալ բան չեն  
 տեսներ, և չգիտնալով որ գեռ բան մը  
 չիմացան՝ գոհ կ'ապրին իրենք զիրենք

գիտուն սեպելով : Ահա այս է պատ-  
 ճառն որ ամէն մարդ իր գիտցածին  
 վրայ գոհ է, և այն գիտցածովը համար  
 ձակ ամէն բանի վրայ կը տրամաբանէ  
 կը սխալի, բայց չիմանար իր սխալիլը :  
 Աւստի այս սխալ կարծեաց առջևն առ-  
 նելու համար մէկ հատիկ ճարն այս  
 է . ամէն մարդ ճանչնայ թէ իր խելքը  
 ամէն բանի չհասնիր, դիմացը գոց ե-  
 ղած բանը աչքը չտեսներ և չտեսած  
 բանին վրայ դատաստան չկրնար ընել .  
 անոր համար պէտք չէ որ ամէն բանի  
 վրայ իր խելքովը մտածէ, կռէ . անոր  
 համար ամէն տեսածը և լսածը մէկէն  
 չմերժէ, այլ պատճառը հարցընէ հաս-  
 կրնալու մտքով . և եթէ տեսնէ որ իր  
 խելքը չհասնիր, իրմէ հմուտ եղողին  
 խօսքին հաւտայ : Այս որպէս զի մարդ  
 կարենայ ապահով ըլլալ այս տգիտական  
 փնասակար կարծիքէն ազատ ըլլալուն  
 վրայ, պէտք է որ միշտ սրտին մէջ վախ  
 մը ունենայ՝ թէ չըլլայ որ ինչ և իցէ  
 բանի մէջ անխորհրդութեամբ իր մտքի  
 դրած հաստատուն կարծեացը հետևե-  
 լով՝ ճշմարտութիւնը մերժող գտնուի :  
 Այս չէ թէ միայն իրենք զիրենք տգէտ  
 ճանչնող մարդիկ զայս զգուշութիւնը  
 պէտք է որ ընեն, այլ և գիտուն սե-  
 պուածներն ալ . նաև անոնք որ իրօք  
 բաւական գիտութիւն ստացած են :  
 Ասն զի ո՛վ կրնայ վստահ ըլլալ իր  
 գիտութեանը վրայ՝ թէ ամէն բանի  
 մէջ, ամէն ատեն, ամէն կարևոր պատ-  
 ճառները հասկընալով՝ առանց ինքը զին-  
 քը խաբելու շիտակ տրամաբանութիւն  
 ճշմարտութիւնը կը գտնէ . բայց յ'ս-  
 տուծոյ ոչ ոք աշխարհիս վրայ կրնայ ու-  
 նենալ այդպիսի վստահութիւն իր ան-  
 ձին վրայ : Անոր համար ամէն մարդ  
 թէ տգէտ ըլլայ և թէ իմաստուն, երբ  
 մտքին մէջ բան մը կ'որոշէ թէ այս  
 բանս՝ սա նա պատճառներուն համար  
 այսպէս է, պէտք է որ մտքին մէջ որոշե-  
 լէն առաջ տարակուսի՝ ըսելով ինքն ի-  
 րեն . Այս սխալական մարդ եմ, Աստուած  
 չեմ . մէյ մը նորէն քննեմ պատճառնե-  
 րը : Այս այս քննութիւնը պէտք է ըլ-  
 լայ այս հինգ բանիս վրայ, որոնք որ սու

վորաբար կը խաբեն զմարդ . Ա . Սովը  
բուռն . Բ . Ինքնահասանութիւն . Գ .  
Նախապաշարմանք . Դ . Կիրք . Ե .  
Տփերութիւն : Աւրիշ ամէն սխալելու  
պատճառները ասոնցմէ առաջ կու գան ,  
ասոնց ճիւղերն են : Ը առ անգամ ա-  
սոնցմէ մէկը կամ մէկ քանին մէկ տեղ  
կը գտնուին մարդուս մտքին մէջ ու կը  
սխալցրնեն մարդուս ճանաչմունքը .  
այնպէս որ՝ եթէ մարդ զասոնք մէկիկ  
մէկիկ մտքին առջև չբերէ , ու չքննէ  
իր սիրտը պարզմութեամբ , կը սխա-  
լի ու գէշը աղէկի տեղ կ'ընդունի :

Ասոնցմէ զսա դարձեալ պէտք է գիտ-  
նայ ամէն մարդ՝ որ շատ անգամ այն-  
պէս մարդուս միտքը կապուած կ'ըլլայ  
բանի մը վրայ՝ որ ինքն իրեն թէպէտ և  
ճշմարիտ սրտով քննել և իմանալ ուզէ  
իր սխալմունքը , դարձեալ չկրնար . ա-  
նոր համար շատ անգամ պէտք կ'ըլլայ  
ապաւինիլ ուրիշներուն վկայութեանը ,  
և առանց կրքի վկայողներուն խօսքին  
հաւտալ ու իրեն հաստատուն երեցած  
կարծիքն ալ մէկդի թողուլ , այն հա-  
ւատի վկայութիւններէն հասկընալով  
իր անկարողութիւնը ուղիղ դատաստան  
ընելու այն բանին մէջ : Անն զի շատ  
անգամ մարդս իր մտայ դատաստանին  
մէջ այնպէս է , ինչպէս որ է մէկ հոտ-  
առութիւն և ճաշակի համառութիւն  
չունեցող , և կամ ըսեմ զգայարանք մը  
պակաս ունեցող մարդուն դատաստանը  
այն բանին մէջ : Տեսութիւն և լսողու-  
թիւն չունեցող մարդ մը միթէ կրնայ  
հասկընալ թէ տեսիլքի գեղեցկութիւ-  
նը և ձայնի քաղցրութիւնը մարդուս միտ-  
քը կը զմայլեցրնեն ու սիրտը կը յա-  
փրշտակեն : Աչ երբէք . այլ պէտք է որ  
ուրիշներուն վկայութեանը հաւտան ,  
եթէ կ'ուզեն որ իրենց պակասութիւնը  
մարդիկ երեսնին չզարնեն՝ ըսելով անոնց  
թէ խուլ էք , կոյր էք և խելք ալ չունիք  
որ պատճառով համոզուիք ու ուրիշին  
խօսքին հաւտաք : Այնպէս ալ հոտա-  
ռութիւն չունեցողին կեցած տեղը եթէ  
փաստակար հոտեր ըլլան , ու զգուշացը-  
նես զինքը՝ որ երթայ այն տեղէն որ  
չփաստուի , ինքը պէտք է որ քեզի հաւ-

տայ՝ եթէ կ'ուզէ չփաստուիլ , ճանչա-  
լով իր տկարութիւնը որ ինքը կարող  
չէ փորձով իմանալ : Այսպէս ալ բեր-  
նի համ չունեցող մարդու մը եթէ ը-  
սես այս գէշ համ ունի , փաստակար է ,  
մի ուտեր , նա թէ որ չմտածեր՝ իր  
տկարութիւնը չճանչնար , խօսքիդ մտիկ  
ընելու և զգուշանալու տեղ , կը դառ-  
նայ խելքէս , կ'ըսէ , ախորժ չունիս ,  
ու ինձ ալ կ'արգիլես ուտելու . ու կ'ու-  
տէ ինչուան որ փաստուի : Ահա այսպէս  
ճշմարտութեանց պատճառներն ալ  
չգիտցողները , եթէ չճանչնան իրենց  
տկարութիւնը և երրորդ կարծեաց  
փաստակարութիւնը՝ նոյն պատճառնե-  
րը գիտցողներուն վրայ կը ծիծաղին ,  
ու իրենք իրենց տգիտութեանը մէջ կը  
մնան , ըսելով թէ Վիտութեան բարակ  
բաները չեմ գիտեր , բայց խօսածս , ը-  
րածս գիտեմ : Այսպէս իրենց ծուռ  
դատմունքներովը կը փաստեն և կը փա-  
ստուին :

Արեմն , ով բարեսէր ընթերցողք ,  
եթէ կ'ուզէք որ այս երրորդ կարծեաց  
փաստներէն ազատի ազգերնիս , ազա-  
տիք դուք , մտածեցէք առանց կրքի այս  
պատճառներուս վրայ . ու երբոր ուրիշ  
մէկու մը ըրածն ու խօսածը մտքեր-  
նուդ դէմ գայ , մէկէն մի այլայլիք ու մի  
սկիւք դէմ խօսելու , մանաւանդ երբ  
կը ճանչնաք թէ այն խօսողը ձեզմէ գի-  
տուն է . այլ հանդարտ մտքով ջանացէք  
հասկընալու պատճառները , և տարա-  
կուսածնիդ հարցուցէք , բայց չէ թէ  
արհամարհելով , այլ ուշ դնելով , քննե-  
լով , չգիտցածնիդ հասկընալ ուզելով .  
զոր օրինակ ըսինք հոտառութիւն չու-  
նեցողի մը համար , որ երբ կը լսէ թէ  
կեցած տեղը գէշ , փաստակար հոտ մը  
կայ , թէպէտ ինքը հոտը չառներ ,  
բայց պէտք է հարցընէ , իմանայ թէ  
ինչ բան է գէշ հոտ ըսածնին , և ինչ-  
պէս փաստակար կ'ըլլայ : Այլ թէպէտ  
ինքը չզգար , բայց պէտք է հաւտայ հո-  
տառութիւն ունեցողին ու զգուշանայ .  
չէ թէ անմտութեամբ սկսի ծիծաղիլ  
հոտն առնողին ու զգուշացրնողին վրայ ,  
կանչուրուտելով անոր երեսն՝ ի վեր թէ

Մեր է հոտ ըսածդ, ինչո՞ւ չեմ տեսներ, ինչո՞ւ կը վնասէ ինձի . արդեօք գաւազանաւ կը զարնէ, թէ քարով կամ սուրով . քու քիթդ այդչափ տկար է որ աներևոյթ բանէն կը ծեծուի ու կը ցաւի . և այլ այս տեսակ տգիտական խօսքեր : — Հիմա կարելի է ըսէք թէ այդպիսի յայտնի բանին չհաւտացող և ծաղրող մարդ ո՞ր կը գտնուի աշխարհիս վրայ : — Ի եցուն է ամէն աշխարհք, ամէն քաղաք, ամէն տուն : Ըսն ամէն անգամ որ մէկն իր խելքը չհասած բանի մը վրայ կ'ուզէ խելք հասցընել, ու ուրիշի ըսածն արհամարհելով կը խօսի ու կը գրէ, նոյն հոտառութիւն չունեցողին համար ըսածներս կ'ընէ, և միտքն ալ կը դնէ թէ շատ խելքով բան է ըրածը :

( ԳԻՏԻ ԸՍՐՈՒՆԱԿՈՒԻ )

ԱՍՐՈՑԱԿԱՆ ԱՌԱԿ

Դէպք պատահ բազումնոյն և գեղջոյն Բերոնեյին :

Ըշխարհիս կեանքը մեզի թշուառ ընելու մեծ պատճառներէն մէկն ալ մեր վիճակին գոհ չըլլալն է, և ինչ բանի մէջ որ Ըստուած դրեր է զմեզ՝ անկէ դուրս աչքերնիս դարձընելն է : Ասան զի Ըստուած իւրաքանչիւր մարդոյ համեմատ կեանք տուեր է և վիճակ, որն որ ճամբայ մըն է մարդուս իր վախճանին հասնելու . երբոր մարդ մը այս ճամբէն կը խտտորի՝ իբրև թէ իր էութեանը դէմ ընելով, խեղճ և ողորմելի կ'ըլլայ, Ըստուծոյ դրած կանոնէն դուրս ելլելուն և իրեն չափը չգիտնալուն համար : Աւստի մեծ իմաստութիւն մըն է իր վիճակին գոհ ըլլալը՝ ինչ որ Ըստուած իր նախասահմանութեամբ որոշեր է մեզի : Սիայն օրինաւոր է մարդոյ անգոհ քաղց մը ունենալ արդարութեան ու առաքինութեան . վասն զի որչափ որ աս անգոհութիւնը զմարդ քաջալերելով մը կը մխիթարէ, այնչափ ալ պատուոյ ու սնոտի փառաց ետևէն վազելը իր վիճակին տեղոհ ըլլալով՝ զմարդ տապնա-

պելով կը նեղէ ու թշուառ կ'ընէ : Ըստ օրերս Ֆենեյնի շինած տղոց համար առակաց ընտիր գիրքը կարգալովս՝ տեսայ այս ճամարտութեան ճշգրիտ պատկերը իր զուարճախօս առակներէն մէկուն մէջ . նորուս մաքիս շատ հաճոյ եկաւ իր նոր կերպ բացատրութիւններն ու մտածմունքը, և ուղեցի թարգմանաբար գրել որ մեզի օրինակ ըլլայ, ու գտնուած վիճակներնուս վրայ գոհ ըլլալ սովորիք : Կը յուսամ որ հեղինակին լեզուն չգիտցողներուն ալ հաճոյական պզտի ծառայութիւն մը ըրած ըլլամ :

Ստեղծութեան մը սաստիկ պառաւած՝ ինչուան բոլոր ակումներն ու մագերթ թափած էին, ու գլուխը հողմաշարթ տերևներու պէս կու գար կ'երթար, ակնոցովն ալ չէր տեսնար, երեսը այնչափ կ'ընձմրակեր քաշուեր էր՝ որ քթին ծայրը թունելն կը գպէր, ու ինքը չորցած պղտիկցած, կուտը կծիկ եղած, ու կուզը ելած՝ կարծես թէ շինծու կեղծիք մըն էր ամենին : Ահուկ մը, որ իւր ծննդեանը ներկայ գտուեր էր, եկաւ իրեն ըսելու թէ կ'ուզէ նորէն երիտասարդ ըլլալ : — Ամենայն յօժարութեամբ, պատասխանեց թագուհին . բոլոր ակումքս կու տայի թէ որ կարենայի քսան տարեկան աղջիկ մը գառնալու : — Պէտք է ուրեմն, ըսաւ վհուկը, պառաւութիւնդ ուրիշ մը ծախես, ու անոր երիտասարդութիւնն ու առողջութիւնը գնես : Ում ամառք քու հարիւր տարիք : Թագուհին փնտռել տուաւ ամէն տեղ մէկ մը, որ ուզենայ զինքը երիտասարդացընելու համար ծեր ըլլալ : Ըստ մը մուրացիկ աղքատներ եկան՝ որ կ'ուզէին հարստանալով ծեր ըլլալ . բայց երբոր տեսան զթագուհին չորցած ձիւաղ գարձած, որ կը հազայ, կը խորդայ, խիւսով կ'ապրի, աղտեղի, պժգակի, հիւանդոտ ու ցնդած, չուզեցին յանձն առնուլ հարստանալու համար այն խեղճութեան մէջ իշխալ յանձն առնուլ, ալ լաւ համարելով մուրանալն ու պատրաստ լաթեր հագնելը : Կու գային նաև փառասէր մարդիկ, որոնց գշտոյն կը խոստանար մեծ ամեծ պատիւներ և պաշտօններ . բայց ասոնք զինքը այնպէս զգուշելի տեսնելէն վերջը՝ « Ինչ ընենք այս պատուոյ տոտիճանները, կ'ըսէին, երբոր չհամարձակինք երևնալու մարդկանց դիմացը », Աերջապէս երկցաւ շնորհադեմ գեղացի աղջիկ մը, որ ուզեց փոխել իր երիտասարդութիւնը գշտոյնութեան թագին հետ, որուն անունն էր Բերոնել : Պառաւը առջի բերանը այս բանիս վրայ վշտացաւ որ իր պառաւութեանը հետ գշտոյնութիւն ալ պիտի կորսընցընէ . սկսաւ ճարը մտածել . « Մէջերնիս բաժնեք, ըսաւ Բերոնեյին, թագաւորութիւնս, կէտը ինձի՝ կէտը քեզի բաւական է, գու գեղայն պզտի աղջիկ մըն ես », — Զէ, պատասխանեց աղջիկը, ինձի բաւական չէ ան, և սամբողջ կ'ուզեմ ապա թէ չէ, թող ինձի իմ գեղձուկ վիճակս, ծաղկադէմ գեղովս . ես ալ քեզի կը թողում քու հարիւր տարիք, թարշամեալ երեսգ, և մահը որ ուրքերուդ տակ կը սարափ : — Պատասխանեց թագուհին :